

## ԽԱԺԱԿ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅՆՐ

Ս. Վ. ԳՅՈՒԼՐՈՒԿԱՂՅԱՆ

Մեր օրերի ճանաչված, շնորհալի արձակագիր Խաժակ Գյուլնազարյանը գրական ասպարեզ է իջել դարիս երեսնական թվականներին: Նրա առաջին ստեղծագործությունը՝ «Զար բազբի մահը» մանկական պոեմը, լույս է տեսել 1938 թ., երբ հեղինակը 20 տարեկան էր, Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող: Երկրորդ գիրքը՝ «Մուլլի վերջը», նույնպես մանկական պոեմ է:

Սակայն Հայրենական պատերազմը կտրում է երիտասարդ Խաժակի ըստեղծագործական թելը. 1941—1945 թթ. Գյուլնազարյանը կռվում էր ֆաշիզմի դեմ՝ ռազմաճակատում և համակենտրոնացման ճամբարներում: Կոշումով ստեղծագործող Խաժակը, սակայն, չէր կարող լռել, նորից գրիչ է վերցնում և զանազան թղթի կտորների վրա բանաստեղծություններ գրում, որոնք բնութագրական են հայրենասեր երիտասարդին: Ճամբարը խուզարկելիս ռումին ֆաշիստները վերցնում են, որ այրեն, բայց ընկերներից մեկը թոցնում է սայլակից, հանձնում մի աղջկա, սա հանձնում է ռումինահայ մի բժշկի, որն էլ 1964 թ. ուղարկում է Հայաստան: Գրքույկը լույս տեսավ 1985 թ.՝ «Գիրք անակնկալ» խորագրով: Դրանք կարոտի, հավատի ու վրեժի մտորումներ են: «Նախքան պատերազմը,— գրում է հեղինակը,— ես չէի կարող մտածել, թե կգրեմ տրտմության, կարոտի, հավատի ու վրեժի երգեր: Դրանք անակնկալ ծնվեցին համակենտրոնացման ճամբարներում, տառապանքի, գրեթե անհույս մաքառման ծանր օրերին» («Գիրք անակնկալ»): Պատերազմի ավարտից հետո վերագառնալով տուն՝ Գյուլնազարյանը նորից գրիչ է վերցնում՝ նվիրվելու իր սիրած մանուկների աշխարհին: Իրար ետևից լույս են տեսնում շուրջ տասներեք մանկական պոեմներ, հեքիաթներ, որոնք նախադպրոցական և դպրոցական երեխաներին միտք ու զգացմունք սնող պատմություններ են: Մանկապատանեկան աշխարհը պատկերող այս ստեղծագործությունները, սակայն, արձակագրի առաջին շրջանն են ներկայացնում: Նա սիրելի է նաև հասուն մարդկանց, ընթերցող լայն հասարակության համար: Նրա գրչին են պատկանում 30-ական թվականների, պատերազմաճյուղի և ետպատերազմյան տարիների հայ գյուղաշխարհը, ուսանողական, կյանքը պատկերող շուրջ տասը վեպեր ու վիպակներ: Դրանցից են՝ «Զրուհաց» (1989), «Զուղարկված նամակներ» (1975), «Ինչ-որ տեղ վերջանում էր հորիզոնը» (1971), «Նուանի» պատմավեպը, «Իմ տան բաց պատուհանները» (1981), «Գնացողները գնացողների մասին» (1989) և այլն:

Արձակագիր Գյուլնազարյանը ճանաչողական լայն մտահորիզոն ունի, քաջատեղյակ է մեր ժողովրդի պատմիկան անցուղարձերին: Ականատես է եղել դարիս Երեսնական թվականների քաղաքական կյանքին՝ համատարած կոլեկտիվացում, կուլակաթափում, բանտ, աքսոր, գնդակահարություն. այնուհետև՝ Հայրենական պատերազմ, լճացման տարիների իրադարձություններ:

Շիրվանզադեի լեզվի մասին ասում են, թե առարկայական է, պարզ ու դիպուկ, կրակող, առանց ավելորդությունների, ձգձգվածություն: Այդպիսին է Գյուլնազարյանի գեղարվեստական խոսքը: Գյուղաշխարհ պատկերող արձակում Գյուլնազարյանը ջուր է խմել Թումանյանի աղբյուրից: Մի քանի դիպուկ արտահայտություններով նա ստեղծում է պատկերներ, դիմանկարներ: Ահա գյուղական մի բակի նկարագիրը.

«Բակունձ շուն կար, կրով բկերն սպիտակեցրած խնձորենիններ ու մի հսկայական թթենի, որի տակ թախտ էր դրված, թախտին փոված էր չթե երեսով խայտաճամուկ ներքնակ՝ վրան թավշե մութաքաներ, թախտի առջև մի փայտաշեն օրորոց՝ մեջը քնած մի փոքրիկ Սաքանյան: Թավշե մութաքաներին թիկնած ծերունին այլևս չէր օրորում ծոռան օրորոցը» (Հետք, 23): Ինչքան առարկայական է բակի նկարագիրը: Հեղինակը ընթերցողի ափի մեջ է դնում բակը՝ խնձորի ծառը, թթենին, թախտը, երեխան օրորոցում, մութաքաներին թիկնած ծերունին: Նկարիչը վրձնի երկու հարվածով կներկայացնի այս բակը: Ահա և մի բնանկար. «Ժայռը գլխարկի հովքարի նման կախվել է ջրերի վրա, դրա տակ ափի մի կանաչ երիզ կար, վրան ուռենի, որի սաղարթները Քասախի ջրերին էին հասնում» (Ջր, 215): Այսպես առարկայական են ու հակիրճ արձակագրի նկարագրությունները: Տեղին է հիշել ոռու գրող Սումարոկովի կարծիքը երկարաբանության մասին. «Երկարաբանությունը մտքի աղբատությունից է: Բոլոր այն խոսքերը, որոնց բառերն ավելի շատ են, քան մտքերը, խոսողի բժամատությունից են»<sup>1</sup>: Երկարաբանության, ձգձգված խոսքի պակասությունը սովորաբար ցույց են տալիս Չեխովի բերած համեմատությունը՝ «Человек сел на траву...»: Իր «Սիրիբը» էսսեում Գյուլենազարյանը քննադատում է բառի ոչ տեղին օգտագործումը, կաղապարված խոսքը, երբ օգտագործում են այս կամ այն բառը, նույնիսկ իմաստը չհասկանալով, օտարազգի կամ գրաբարյան բառեր, որոնք խոսքին չեն մերվում, ջոկվում են, ինչպես ազոավը ձյան վրա:

**Բառապաշարը.**— Հարուստ է Գյուլենազարյանի արձակի բառապաշարը չեզոք ու ոճական ձևերով: Նրանում կյանք են ստացել գրական հայերենից, գրաբարից, միջին հայերենից, բարբառներից, օտար լեզուներից ընտրված ձևեր: Այդ ընտրությունը երկու նպատակ ունի. մի դեպքում՝ այդ ձևերով հարստացնել գրական լեզուն, մյուս դեպքում՝ ստեղծել ոճական միջավայր՝ այս կամ այն անձը, երևույթը բնութագրելու համար, այսինքն՝ ստեղծել լեզվական համապատասխան միջավայր (կոլորիտ): Այս տեսակետից էլ արձակագրի օգտագործած բարբառային ձևերը բաժանվում են երկու խմբի:

ա) Բառեր, որոնք գրական լեզվում ունեն իրենց համանիշը, նեղ բարբառային են, գրական լեզու չեն մտել, բայց հեղինակը դիմել է դրանց՝ խոսքային համապատասխան միջավայր ստեղծելու նպատակով: Դրանց կիրառությունը հիմնավորվում է սովյալ պատմական շրջանը, կենցաղը, մարդկանց մտածելակերպը ճիշտ ներկայացնելու նպատակով: Օրինակներ՝ «Այստեղ մասուն կա, ևսփստ, գոմ, խոտանոց, թոնրատուն» (Ձև, 269): «Մեր տան քարեֆին զրված էր Ավետարանը» (Իմ տան, 28): «Մեռել էր սաքոջամից» (Իմ տան, 51): «Գնանք մի ճոք հաց ուտենք» (Ոսկի, 36): «Նկարը դրված էր շագանակագույն կոմոդի վրա» (Ջր., 377): «Գինին կվարտով դրել էին մեջտեղը» (Ջր, 382): «Խազի էր, այսինքն, չեմ ուզում, ջերս քցի» (Ջր, 383): Սրանք բոլորը շինականների խոսքերից են քաղված: Նրանց խոսքերում հանդիպում են նաև՝ թոմարի, խալվար, տալդա, դալան, արշա գցել և այլն: Հեղինակի խոսքում էլ կան բարբառային ձևեր, դա նույնպես ոճական միջոց է, այդ դեպքում հեղինակը խոսում է հերոսի՝ շինականի անունից: Օրինակ՝ «Հորաքույրս միայն յոթին էր արշա գցել» (Ջր, 496): «արշա գցել»-ը հորաքույր բառն է: Այլ օրինակներ. «Մտնում էին նախասրահ, կամ, ինչպես դժուրի Ղազարի կինն էր ասում, «հաշտը»: Այնուհետև հեղինակն օգտագործում է այդ բառը, առանց չակերտների, շինականի անունից: «Հաշտի հատակը հող էր: Սենյակը հաշտից շքեղ էր» (Ջր, 491): «Տնեցոց օթխաններ երկուան են» (Ջր, 497): Սվաղշի Դումանն ասում է «Քույրիկ, յալանշուն յալանշություն չեն սովորեցնի» (Ջր, 438): Հեղինակը միտումնավոր է այդ բառն օգտագործել, դա Դումանի բառն է:

բ) Բառեր, որոնք գրական լեզվում չունեն իրենց համանիշը, և հեղինակը: ստիպված է օգտագործել դրանք: Օրինակ՝ դայթան, շտոֆ, մթել, մեկդակել, ջեջիմ, կոու, բղուղ, խուրջին, սալա, դաստախուն, փարխաշ, ջամ և

<sup>1</sup> А. Н. Ефимов. Об изучении художественных произведений, с. 135.

այլն: Բնագրային օրինակներ. «Կար սև դայթանով կապած թղթերի փաթեթ» (Ձն, 205): Ի՞նչ բառով կարելի է փոխարինել ղայթանը, որը այժմ մազից գործած հաստ թելն է. կամ պիտի նկարագրական ձևով ասեր, կամ էլ բառն օգտագործեր, ճիշտը երկրորդ միջոցն է: Կամ՝ «Մի շտով գինի էի տվել» (Ջր, 530): Շտոֆը 4—5 լիտրանոց աման է (շիշ), որի դիմաց հայերեն բառ չկա, եթե գրեր հինգ լիտրանոց շիշ, չէր հասկացվի: «Ինչպես կոու ընկույզի միջից մայրս մեկղակի ասեղով ընկույզի միջուկն էր փշուր-փշուր հանում, ես այդ տետրակի միջից փշուր-փշուր հանել եմ իմ այս հեքիաթը» (Իմ տան, 45): Այլ անգամ շինականն է ասում. «Կոու պոպոթի նման պինդ էր» (Ջր. 519): Ինչպես տեսնում ենք, հեղինակը շինականի պոպոթ-ի դիմաց ասում է ընկույզ, բայց ստիպված է կոու ասում, եթե ասեր պինդ, սխալ կլիներ, որովհետև կոու է այն ընկույզը, որի միջուկն է խցանված, ընկույզը կարող է պինդ չլինել, հեշտ կոտրվել, բայց կոու լինել: Հեղինակի օգտագործած շատ բառեր ժողովրդախոսակցական շերտին են պատկանում և միտում ունեն մտնել գրական լեզու կամ արդեն մտել են: Օրինակ՝ սուփրա, քավկիր (քափկիր), մութաքա, մեկղակել, սարթ, կոու, պսպղալ և այլն: Որոշ բառեր էլ գործածությունից ընկել են, որովհետև այլևս չկան այն իրերը, որոնց անվանումն են իրենք, օրինակ՝ ջեմ, դաստախուն, փարխաջ, ջեջիմ և այլն: Բարբառային շատ բառեր էլ հեղինակը կամ չակերտների մեջ է առնում, որ նըշանակում է, թե չի ընդունում, երբեմն էլ բառի բացատրությունն է տալիս: Այսպես. «ջորջ»՝ չորացած ճյուղ: «Ալվալոնց Սարգիսը Կոշցոնց Սողոմոնի հետ «քարի էր մտել», այսինքն քվեարկվել էր տանտետրություն համար» (Ջր, 384): «Պապս հաղթանդամ էր, այգեգործի «փանջավոր», այսինքն ոսկրոտ ու խոշոր թաթերով» (Ջր, 431): «Սալքատեղ կար, այսինքն պատի մեջ մի խոր նիշ, որտեղ մեր անկողիններն էին պահվում» (Ջր, 205):

Գյուլնազարյանը օտարազգի բառերի գործածման հարցում էլ երկու վերաբերմունք ունի, երկու սկզբունք. այն բառերը, որոնց համանիշը կա հայերենում, գործածում է ոճական նպատակով, իսկ այն բառերը, որոնք չունեն, գործածում է գրականի բառապաշար մուծելու նպատակով: Այսպես. «Անասուններն ու ինվենտարը բաժանել,—ասում է նախագահը» (Հետք, 110): Պարզ է, որ քննադատված է նախագահը, որ գույլ-ի փոխարեն ասում է ինվենտար: Մի այլ տեղ գրասենյակի աշխատողն ասում է. «Մեր գրասենյակն ունի երկու «դեյա» ու մի «գործ»: Մի գյուղացի ասում է. «Հիվանդանոցում մի շաղ բժշկուհի ունենք, անունն էլ վրաչ ա» (Հանաք, 69): Այս երկու դեպքում էլ հեղինակը հեզնում է շինականին: Հանդիպում ենք նաև կոստյում, ինտենդանտական բառերին, որոնք միտում ունեն մտնել գրական լեզու: Շինականներին անհատականացնում է նաև ֆրենչ, վիզիտնի կոստյում և այլ օտարազգի բառերով: Կան և այնպիսի բառեր, որոնց գործածությունը պատճառաբանված չէ, ինչպես՝ յուլտե սապոգներ, էսկուլապ, վենդետա, կոնսերվացված, կարտուզ և այլն:

Գյուլնազարյանի գեղարվեստական խոսքի բառապաշարի մասն են կազմում նաև փողոցների հին անունները, որոնք բնութագրում են հին Երևանը, ինչպես՝ «Գյուրջի քարվանսարա», «Ցախի մեյդան», «Ղանթարի տակ», «Դավա յաթաղ», «Շիլաչի», «Աստաֆյան» և այլն: Գյուլնազարյանի արձակում կան բառեր ու դարձվածքներ, որոնք այսօր չեն գործածվում, հնարանություններ են, ինչպես՝ ձայնազուրկ, համատարած կոլեկտիվացում, կուլակ, կուլակաթափ, կուլակի դուդուկ, կուլակի ջրաղացին ջուր լցնել, զգոնություն բթացում, սոցիալիզմ, կոմունիզմ, աշխօր, եժովյան ձեռքեր, թշնամու գործակալ, անբարեհույս տարր, զտում, կուշարքեր, ստալինյան կարգեր, լեհինյան ուղի, բանդիտ և այլն:

Արձակում կան նաև բառեր, որոնք ամբողջովին և կամ ձևափոխումով Գյուլնազարյանն է կազմել: Օրինակներ՝ էդ. Աղայանի բառարանում կան ծո-  
րանք, ֆեզիպես բառերը, Գյուլնազարյանն ասում է ծոբք, ֆեզավարի: Հի-  
վանդանոցի բժշկի «օբխոդ»-ի դիմաց գրում է բժշկայց, բայց ընդունված է  
Աճառյանի տերմինը՝ համայց: Խուրջին-ի դիմաց արձակագիրը կազմել է ճե-  
ղատուպրակ բառը, տիկ բառի դիմաց՝ ուլի մաշկապարկ, ռոզադկայի դիմաց՝  
ճեղապարսատիկ և այլն: «Ողջունում ես քեզավարի» (Չն, 47): «Ավանակի  
ճեղատուպրակից հանեց ուլի մաշկապարկը գինով» (Նոանի, 292): «Ճեղա-  
պարսատիկը պայուսակներում» (Ջր, 277): Գրում է կենսից, ճուտակալել,  
օդակայան, մահենիք և այլն:

**Դարձվածքներ.** դրանք լեզվի բառազանձի մասն են կազմում. մեծ մասամբ  
ունեն ժողովրդական ծագում: Նրանք կարճ ու իմաստալից արտահայտու-  
թյուններ են, իմաստների խտացում, ունեն ոճական մեծ արժեք: Արտահայ-  
տում են գնահատողական, զգացական վերաբերմունք՝ փոխաբերական կի-  
րառությամբ: Լեզվաբանները դարձվածքները, որոնք ժողովրդի դարավոր  
փորձի արդյունք են, բաժանում են շորս խմբի. դարձվածքային միակցու-  
թյուններ (գլխի ընկնել, գլուխ տանել, գլուխը յուղել), միասնություններ  
(վիզը ծռել, աչք գցել, գլխին նստել), կապակցություններ (նուրբ հարց,  
քիթը ջարդել, կյանքի ընկեր, գլուխը կախ), արտահայտություններ (կենդանի  
դիակ, ոսկե միջին, պատենավոր մարդ, ծառերի ետևը անտառը շտեմնել):  
Ոմանք դարձվածքների շարքին են դասում, ոչ առանց հիմունքի, նաև առած-  
ասացվածքները, թեև վոր խոսքերը, հեղինակային աֆորիզմները (ասուլթ-  
ներ), որոնք նույնպես փոխաբերական իմաստ ունեն, կենսափորձի հետևանք  
են: Դարձվածք են համարվում նաև անեծքները, մաղթանքները, որոնք նույն-  
պես լեզվական պատրաստի միավորներ են:

Դարձվածքներն ունեն նաև տարբերակներ, որոնք այնքան շատ են  
Գյուլնազարյանի արձակում: Դրանք գոյանում են, երբ. 1. բաղադրիչներից  
մեկը քերականորեն տարբերվում է մյուսից, ինչպես՝ գլուխը յուղել—գլխին  
յուղ քսել, արյունը գլուխ խփել—գլխին խփել և այլն, 2. բաղադրիչներից  
մեկը արևմտահայերեն է (գլխի գցել և գլխի ձգել, խելքը գլխից հանել—  
գլխեն հանել և այլն), 3. բաղադրիչներից մեկը բարբառային է (գլխին ըն-  
կույզ ջարդել—պոպոք կամ կակալ ջարդել և այլն), 4. բաղադրիչներից մեկը  
գրաբարյան է (տերն ընդ ձեզ—տերը ձեզ հետ և այլն), 5. բաղադրիչնե-  
րից մեկը զեղչված է (բախտի քմահաճույքին թողնել— բախտին թողնել և  
այլն):

Տեսնենք, թե Գյուլնազարյանի արձակում ինչ դարձվածքներ, առածներ,  
մաղթանքներ, անեծքներ, թեև վոր խոսքեր, ասուլթներ կան՝ ասված հեղի-  
նակի ու հերոսների կողմից, այդ միավորների ոճական արժեքն ու կիրառու-  
թյունները:

Գյուլնազարյանի արձակի լեզուն թեև ժողովրդային է իր պատմելաձևով,  
բառապաշարով, պատկերավորման միջոցներով, սակայն ժողովրդայնության  
լավագույն միջոցը մնում են դարձվածքները, որոնցով այնքան հարուստ է  
Խաժակի արձակը: Լեզվական այդ միջոցներն օգտագործված են.

1. Քաղվածաբար մեջբերումով, առանց փոփոխության, բառացի: Ինչ-  
պես՝ «Ասած է. «Մի ձեռ որ շես կարում կտրես, պաշա, դիր ճակատիդ»  
(Ջր, 534): Զարոյի հասունությունը ծերունին բնութագրում է. «Ուլը քթոցի  
տակին մնալ չի» (Ոսկի, 177): Շինականի մեծախոս, մեծամիտ բնավորու-  
թյունն է արտահայտում նրա օգտագործած դարձվածքը. «—Հարութ, բերա-  
նըդ կոճկի, թե չէ վեր կացա, մեծ կտորդ ականջդ կթողնեմ»: Հետո դիմելով  
կողքինին՝ ասում է. «Սրան էն օրը գցեք, որ շունը ձեռիցը հաց շառնի»

(Հետք, 89): «Սերգոն ու Պարույրը իրար հետ շուն ու կատու են» (Զն, 94): Բնութագրական են նաև հետևյալները. «Տատս ասում էր. «Մարդ իր վերմակի շափ պիտի մեկնի ոտը» (Զն, 260), «Ազիս ասում էր՝ «ամառվա փուշը, ձը-մեռվա նուշը» (Զր, 405):

Դարձվածքը խոսքին կապակցվում է քերականական որևէ կարգի (դեմք, թիվ, ժամանակ) փոփոխություններով: Ինչպես՝ «Գարեգինը քարին քացի տվող մշակ է եղել» (Իմ տան, 41): Հովանավորչությունն է քննադատված՝ «Գարոցի դիրեկտորը պատի ծակից շէր ելել, թիկունք ուներ» դարձվածքով (Իմ տան, 149): Հեղինակը Սիբիրի դաժան ցրտին ու այլ դժվարությունների դիմանալն է ակնարկում, երբ ասում է. «Ընկերովի մահը հարսանիք է: Մենք ընկերներով էինք: Իմ արյունը նրանց արյունից կարմիր չէ» (Սիբիր, 23): Ինչպես Սիբիրի մարդիկ էին դիմանում, այնպես էլ իրենք պիտի դիմանային: Ամուսնանալու գաղափարն է արտահայտում հեղինակը «Ինձ ու Հովակիմ ընկերոջս Մարգարիտ քույրիկը «կանաչ կարմիր» կապեց» (Զր, 380) դարձվածքով: «Գլուրվեցին տարիները, ինչքան ջրեր հոսեցին, ինչքան տներ քանդվեցին, ինչքան տներ շինվեցին»,— ասում է հեղինակը՝ բնութագրելով իր ժամանակի թոհուրոհի ծանր տարիները (Զր, 380): Ներսես բիժան պատմում է, թե «Երբ խնամախոսները սեղան նստեցին, ամաչեցին առաջարկ անել, տանտերը՝ Մարգարանց Ասլանն ասաց. «Վլաս, ես գիտեմ, ատամներիդ տակին բան կա: Բարով եք եկել, ասա, տեսնեմ ի՞նչ կա»: Վլասն ասում է. «Ասլան, ասում եմ հողը հողին խառնենք, մեր տղին տանք, ձեր աղջկան առնենք» (Զր, 382): Երկրի անիշխանական, անբարեհույս վիճակը ծերունին արտահայտում է. «Մարդու գլուխը դարձել է սոխի գլուխ» դարձվածքով (Զր, 391): Ծերացած ու նիհարած հարևանին շինականը բնութագրում է՝ «Փոստը փորի տակն է ընկել» դարձվածքով (Զր, 399): «Արևշատը դառը դատեց, դատարկ նստեց: Որ ասեմ մային էլ չհանեց, հավատա: Երեք տարում հազիվ պարտքի տակից դուրս եկավ: Էն էլ դուրս չէր գա, եթե էս ու էն ձեռ շրճենին» (Զր, 408): Ծերունի շինականը որդուն խրատելիս ասում է. «Ծս հո սերմացու չեմ, էսօր կամ, էգուց մեկ էլ տեսար նալեւս տնկեցի» (Զր, 452): Շինականը կոլտնտեսության անարդյունք, չգնահատվող աշխատանքից դժգոհում է՝ «շատ աշխատողին շալե շապիկ» դարձվածքով (Ոսկի, 36): «Նազոն,— ասում է մի շինական,— խալխի օջախի կպչան էր, տարան, օջախը վառեցին: Վասիլի օջախը մնաց սառած» (Զր, 424): Այսպես օգտագործված են՝ մնացին ձեռները ծոցներին, սև կատու է անցել, գլուխը տակը չի տալիս և այլն:

3. Դարձվածքը դառնում է խոսքի շարունակություն, ընդմիջում է խոսքը: Ինչպես՝ «Մաղաքանց Այսերի ու Անտոնի Համոյի ջուրը մի առվով չի գնում: Պարզապես «երկու դոշի գլուխ մի պարկում չի տեղավորվում» (Զր, 489—490): Շատախոս, ուրիշին հերթ շտվող Վարանցոյին Մաղաքանց Այսերը ասում է. «Այ տղա, ախր խոփոց սուր է, համա հանդը բաժանովի է, կաց, որ ուրիշներն էլ մի բան ասեն, է՛» (Զր, 516): Մի երիտասարդ մերժում է գինին խմել, ծերունին ասում է. «—է՛, գուր չի ասված, որ պտուղը ծառից հեռու չի ընկնի, հորդ կտորն ես էլի» (Զր, 468):

Ասելիքը բազմազան ու հետաքրքիր դարձնելու համար հեղինակն օգտագործում է դարձվածքների տարբերակները: Օրինակ. Առածն ասում է՝ գլուրավ խուփը, գտավ պուտուկը, իսկ Գյուլնազարյանի արձակում կճուճն է գլուրվել խուփը գտել (Զր, 503): «Մի շենը լավ է, քան երկու ավերը» առածի դիմաց շինականն ասում է. «Մի շենը լավ է, քան օխտը խարաբեն» (Հոր, 231): «Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, էն աղբյուրին քար չի գցի» առածի դիմաց ասում են՝ «Մի թքիր այն ջրհորի մեջ, որտեղից ջուր ես խմում» (Զր,

126): «Տկլոր յաշին կատու շալակելն էր պակաս» առածը Սալբին դարձնում է. «Տկլոր ջանիս կատու շալակելն էր պակաս» (Ոսկի, 211):

Գյուլնազարյանի արձակում երբեմն առածը, ասացվածքը նկարագրական ձևով է օգտագործվում, ասվում է բովանդակութունը: Այսպես՝ «ուղտի խաղի կամուրջի վրա կբռնի» առածը նկատի ունենալով շինականն ասում է. «Ասաց հայտնի առածը այն ուղտի, որի խաղը կամուրջի վրա է բռնել» (Չն, 143): Կամ՝ «տեսնենք երբ է Եզոր Գեղամիշի դռանը շոքած ուղտը քո դռանն էլ շոքում» (Իմ տան, 92): Մի շինական ասում է. «Կրկնում է ժողովրդական առածը նոր հավերի ու երկաթի ձվերի մասին» (Չն, 189): «Գոյութուն ունի ժողովրդական իմաստութունը մեռնելու և մեռնելուց հետո սիրով վարձատրվելու մասին» (Չն, 40): «Սահակն ու Ստեփանը հինգ տարի կարճ գարի էին հնձել բոլոր առարկաներից» (Ջր, 340): «Այժմ մանր թերութուն չկա, ամեն ինչ ջուր է թշնամու ջրաղացին» (Ջր, 55):

Անեծքներով ու մաղթանքներով հեղինակը բնութագրում է դրանք օգտագործողին: Այսպես. պառավ Սոնան անիծում է. «Աստված տունդ ավիրի, Համազասպ, կրակ ընկնիս, խորովվիս, երթաս զուլալ աղբյուր, ցամաքի, երթաս կանաչ արտեր, խոտը խազալ եղնի, հաց ուտես, քար ընկնի ատամիդ տակ, թիկունքդ կապուտ եղնի, երեսդ՝ ճերմակ, ջուխտ աչքով կուրանաս, ընկնիս խալխի դոներ, մնջվիս, տեղումդ շոնջվիս» (Ջր, 508): Ահա Քշիտուն մայրիկի մաղթանքը. «Ցուրակ ջան, գլխովդ պտիտ գամ, շարդ տանեմ, սուլթան ու խան ջանիդ մատաղ, նամակս ստանաս թե չէ, էդտեղ երեսդ սապնես, էստեղ թրաշես» (Ջր, 500):

Գյուլնազարյանի արձակում մեծ տեղ են զբաղեցնում հեղինակի ու գործող անձանց ստեղծած իմաստախոսութունները (աֆորիզմ), որոնք, ինքնըստինքյան, հարստացնում են գրական հայերենի բառապանծը: Դրանք կարճ, խտացված իմաստալից խոսքեր են, որ ժամանակի ընթացքում խոսքից դուրս գալով՝ դառնում են լեզվի միավոր, թևավոր խոսքեր: Դրանք կիրառվում են թե խոսքին շաղկապված, թե առանձին մեջբերումներով: Իմաստախոսութունները, շնորհիվ իրենց հարուստ բովանդակության, սեղմության, պատումը դարձնում են ճկուն, դյուրընթեռնելի, դյուրմբեռնելի: Դրանք ժամանակ չեն ճանաչում: Դեռ անտիկ աշխարհում ստեղծված իմաստախոսութուններն այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակութունն ու թարմութունը: Այսօրվա համար որքան բնութագրական է Պարույր Սևակի իմաստախոսութունը՝ Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի, մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում: Գյուլնազարյանը նույնպես ունի ժամանակ չճանաչող իմաստախոսութուններ: Դրանցից են. Շարքում յուրաքանչյուր զինվոր մի կաթիլ ջուր է հաղթանակի ջրաղացին (Հոր, 19): Ոչ մի ուժ չի կարող սպանել մարդու սերը մարդու նկատմամբ (Սիբիր, 80): Փոքր վշտերն են միայն արցունք քամում (Չն, 61): Աշխարհի ամենածանր մետաղը լոսութունն է (Իմ տան, 66): Մարդիկ ծեծում են, երբ միակն ես, մարդիկ միակը հանդուրժել չեն կարողանում (Չն, 95): Նախանձը հզոր զգացում է, մանավանդ թույլ մարդու համար (Չն, 104): Աստված մարդուն լեզու է տվել, սիրտը թաքցնելու համար (Ջր, 131): Չիք արքայութուն երկնից: Չիք աստված, սրտիդ աստծուց բացի (Ոսկի, 314): Աշխարհում ոչ մի ճանապարհ չի եղել, չկա ու չի կարող լինել՝ առանց կեռամանների (Սիբիր, 21): Կանանց բնութունը արցունք է տրվել՝ դրա մեջ խառնելով ուրախութուն, վիշտ, երախտագիտություն (Չն, 314): Ամեն ինչի միջինը ինչքան էլ ոսկի լինի, կյանքի թշնամին է, լճացման, ճահճացման պատճառ: Կյանքի առաջինթացի համար այրվել է պետք (Ջր, 361): Զուլալ աղբյուրն անգամ ապահով չէ պղտորումից (Ջր, 131): Զի ծախողը ստացած փողով էլ էլ չի կարողում պոնի (Ջր, 470):

Գյուլինազարյանի արձակի պատումի մասն են կազմում դասական գրականությունից, ժողովրդական երգերից բերված քաղվածքները, որոնք խոսքը համեմուտ են պատկերավոր, կարճ ու իմաստալից միջոցներով: Այսպես. «Կտրտված ճանապարհներ» պատմվածքում երիտասարդ Վարդուհու և նրա ծեր ուսուցչի միասին երևալը բնութագրում է Թումանյանի տողերով.

Հայրը ինչպես մռայլ մի ամպ,  
Աղչիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարված՝  
Դուրս են գալիս միասին: (Ջր, 333):

Հայրենական պատերազմի տարիների Դնեպրը բնութագրում է Թումանյանի տողերով. «Հոսում է Դնեպրը՝ Ցավին անտարբեր, դավին անտեղյակ» (Ջր, 218): Խոսելով համալսարանի դասախոս Սիմոնյանի մասին, որը նախահեղափոխական շրջանի մտավորական էր և Եվրոպայում կրթություն ստացած, հեղինակը նրան բնութագրում է Թումանյանի բառերով. «Մարտական մորուքով մեղմ ծերունին շփոթվել է «նոր ընկերի ու հին ցարի արանքում» (Ջր, 83): «Գոհարը հայերեն է նվագում («Ասում են ուռին»), որ Արամը հասկոնա» (Ջր, 151): Տգեղ Սեդրակը Ջարիկի համար սիրուն է, քանի որ, ինչպես արևելյան բանաստեղծն է ասում, «Ոչ թե սիրունն է սիրելի, այլ՝ սիրելին է սիրուն» (Ջր, 177):

Իր ժամանակաշրջանի երգերի ու բանաստեղծությունների միջոցով հեղինակը պատկերում է այդ շրջանի հասարակական-քաղաքական միջավայրը, կենցաղը: Այսպես. գինվոր Տիգրանը իր խոսքին կցում է ժողովրդական հայտնի երգի տողը «Զինար ես, կռանալ մի, մեր դռնն հռանալ մի» (Հոր, 52): Կոմիտասի երգից է սա, որ ժողովրդական է դարձել: Սիրահարված երիտասարդը երգում է. «Մուժը աճ է, շարքեր շատ կան, Սև աչերը մի սիրք» (Ջր, 358): Հին թաղամասում «Մի ծանոթ տղա՝ աչքը մի բաց պատուհանի, մեկին երջանիկ կշտամբում է՝ Դու անմեղ ես, քո աչերն են մեղավոր» (Ջր, 198): «Մայրս Թաթոսի խնդրանքով երգում էր.

Տեսա, քույրիկ, ագիգ բալեդ  
Քարն էր դրել բարձի տեղ,  
Անուշ սիրով տաք գնդակն էր  
Կրծքին սեղմել յարի տեղ» (Ջր, 202):

Հիսունական թվականներին տարածված երգերն օգտագործելով՝ հեղինակը ներկայացնում է ժամանակի հասարակական կյանքը, կենցաղը: Ինչպես՝ «Աչքով արի, դուրս կանչեցի Սոֆիկին», «Հե՛յ ջան, Երևան», «Լուսգ քոռնա, այ իմ հեր», «Ես թոքախտով հիվանդ պառկած», «Պատուհանդ բաց արա» և այլն: Այս երգերը մեջբերելիս երբեմն հեղինակը հեգնում է: Օրինակ՝ ընկերոջ հարսանիքին հավաքվել էր մի խայտաբղետ երիտասարդություն: «Քաղաքի ընտանիքներից եկածները օտարահունչ երգեր էին երգում, տալիս էին էդդի Ռոզների, Արտեմի Այվազյանի անունները, իսկ Արամուսից եկած Սահակն ու իր ընկերները հին էին ու երգում էին.

Լուսգ քոռնա, այ իմ հեր,  
դու անարև մնաս,  
Կոմսոմոլ էն տղեն,  
Առանց բարև գնաց:

Կամ՝

Ես թոքախտով հիվանդ պառկած,  
Վաղ, թև ուշ պիտի մեռնեմ,  
Ազգ-բարեկամ, եկեք տեսնեմ,  
Նոր ես իջնեմ գերեզման: (Ջր, 338):

Ռոզներին սիրողներին անվանում է «եվրոպացիներ», իսկ այսպես ասած ռաբիս սիրողներին՝ «արևելցիներ»: Հենց շակերտների առկայությունը հեզնանք է արտահայտում: Ժողովրդական երգերով հեղինակը նաև բնութագրում է հերոսին: Այսպես. «Սիրով թե գինով հարբած մի տղա, ամայի փողացում ձեռքը դրել էր այտին և քաղաքով մեկ հայտարարում էր.

Լուսնյակ գիշեր բուրովին քուն չունեմ,

Ինձ տեսողը կարծում է, թե տուն չունեմ, վա՛յ տուն չունեմ (Ջր, 256):

«Ասատուրը դուրս եկավ Վարդուհու բնակարանից, գնաց իր տանը վիշտը և կարոտը գինու մեջ խեղդելու»: Այդ միջոցին «մի ջահել սիրահար երևանյան սերենադ էր երգում պատուհանի վարագույրի ետևը թաքնված սիրած աղջրկան.

Ասում են, թե դու այնպես

Մոռացել ես ինձ այնպես,

Որ երբ անունս են տալիս,

Հագիվ միտդ եմ գալիս (Ջր, 360):

«Կտրտված ճանապարհների» հերոս Տիգրանը երգում է պատերազմի ժամանակ շատ տարածված «Մարտիկի երգը», որ Գ. Սարյանի «Կարոտն» է՝ Սաթյանի երաժշտությամբ. «Թռչեի մտքով տուն, Ուր իմ մայրն է արթուն (Ջր, 351):

Այս երգերը մի տեսակ հարազատ միջավայր են ստեղծում ընթերցողի համար, որն ապրել է այդ տարիներին, և հիշողությունը նրան տանում է դեպի անցյալը: «Սպիտակն ու սևը» վիպակում երիտասարդն ասում է. «—Օլլա, Իհարկե, ես չեմ հասկանում Բախի տոկատան, ընդհակառակը, ինձ դուր է գալիս «Խառը դոշիս» երգը» (Ջր, 289): «Մայրս սիրում էր աշուղական սիրավեպերը՝ «Ասլի Քյարամ», «Լեյլի Մեջնուն» (299): «Ո՛չ հայրս, ո՛չ էլ մայրս չէին կարող պատշաճ կերպով գնահատել տիկին Իզաբելի բարձր արվեստը: Նրանցից շատ հեռու էին օտար կոմպոզիտորների հորինած դաշնամուրային կոնցերտներն ու սոնատները, նրանց սիրած երգերը՝ «Սիրեցի, յարս տարան», «Սպիտակ մազեր», «Արի, իմ սոխակ» և նմանները Իզաբելը չէր նվագում» (Ջր, 307): Ժամանակի քաղաքական բնութագիրն է հեղինակը տվել՝ գրելով. «Այդ տարիներին մի պարզունակ երգ էր շրջում գյուղից-գյուղ. «Ա՛յ ընկեր Ստալին, Մտիկ արա իմ հալին, Համ հիմի ես ուզում, համ կալին, Բա ես ո՞նց պահեմ իմ բալին» (Ջր, 552):

Գյուլնազարյանի արձակի ոճական միջոցներից մեկն էլ այն է, որ հերոսներին բնութագրում է՝ նրանց նմանեցնելով գեղարվեստական գրականության կամ պատմական այս կամ այն հերոսին: Օրինակ. «Արամը առաջին անգամ կյանքում դարձավ Ջեյմս Կուկ» (Ջր, 183): «Չուղարկված նամակներում» Հարությունը և մի ուրիշ երիտասարդ սիրում են Ջեյմսային: Տղան իրեն ածուխի է նմանեցնում, իսկ Հարությունին՝ ոսկու, և ասում է. «Այն խաբկանքն ունեի, թե Ջեյմսան մանուկ Դավթի նման կշփոթի ոսկին ու շիկացած ածուխը և ձեռքը շիկացած ածուխին կտանի» (Չն, 448): «Իմ ազգականների տունը Ռոտշիլդների տունը չէր» (Ջր, 403): Այսինքն աղբատ էր. «Ո՛չ մեկը դեռ Ապոլլոն չէր դարձել նրա աչքում» (Իմ տան, 70): Մեկի կինը փախչում է մի հարուստի հետ: Այս առիթով ասում է. «Աննան նկատեց, որ Կարենինի ականջները երկար են» (Իմ տան, 152): Մի այլ մարդու մասին ասում են. «Հավատացյալ չէր, նեխուղովի կյանքն իզուր կորած էր համարում» (Չն, 83): Արամը հանկարծ զգաց, որ ինքը մոլորված Գառնիկ ախպերն



է ու գնում է քրոջ հետ, քրոջ ետևից. «Արևը վառ, ճամփեն երկար, ո՛չ աղբյուր կա, ո՛չ առու» (Ջր, 148): «Ընկերների կարծիքով Մարգոն ոչ լուր Բրիչիտա էր, ոչ Բրիչիտ Բարդո» (Ջր, 363): «Մայրս Չեխովի «Հոգյակ» պատմվածքի հերոսի նման գովարանում էր ամուսնու արհեստը, որ սովորական պատշար էր» (Ջր, 307):

Իր ժամանակի երգերն ու բանաստեղծություններն օգտագործելով հեղինակը ոչ միայն միջավայր է ստեղծում, պատկերավոր խոսք, այլև խոսքին տալիս է քնարական երանգ: Այն, ինչ նա պիտի նկարագրական ձևով ներկայանցի, ասում է մի քառատողով, մի նմանեցումով: Պատահական չէ, որ Գյուլնազարյանը գրում է. «Իմ սերնդի ներկայացուցիչներն իրենց կյանքից շատ բան կգտնեն այս պատմության մեջ» (Ջր, 383):

Գործող անձանց անհատականացումը նրանց լեզվի միջոցով. Գրական ստեղծագործության գործող անձինք անհատականացվում են իրենց մտածելակերպով, հոգեբանությամբ, արտաքին նկարագրով, գործով, սակայն պակաս միջոց չէ նաև նրանց լեզուն, խոսքը: Լ. Տոլստոյր մի առիթով քննադատել է Շեքսպիրին, թե նրա հերոսները խոսում են միևնույն լեզվով, միևնույն խոսքով: Թեև պետք է ասել, որ մենք չենք շփոթում Յագոյին ու Օթելլոյին:

Գյուլնազարյանն աշխատել է, որ իր հերոսները տարբերվեն նաև իրենց խոսքով, ոճով: Այսպես, օրինակ, կան մարդիկ, որ աշխատում են իրենց խոսքին խառնել գրքային, գրաբար ձևեր, որ ցույց տան, թե զարգացած են: Մնացական բիձան իր խոսքին (խառնում է այդպիսի ձևեր: «Զորս դու պատվիրեցիր: Ողջ լինես,—ասում է նա» (Ջր, 417): «Սիմոնը երկու կնիկ առավ,—ասում է շինական Այսերը,—երկուսն էլ փախան, վասնզի գիժ է» (Ջր, 412): Կան հերոսներ էլ, որոնք անհատականացված են իրենց ձգձգված, երկարաբան, փքուն ու ճռոտ խոսքով: Այդպիսի փքուն, անտեղի համեմատություններով խճողված խոսքով է անհատականացված գյուղական ուսուցիչ Հարությունը: Նրա ձգձգված բաժակաճառում յուրովսանն «մեկնաբանվում» է ույուտ բառը, մեջ է բերվում Գերմանիայի ու ԽՍՀՄ-ի հաշտության պայմանագիրը, բացատրվում է պրոռաբ բառը, որոնք ոչ մի կապ չունեն կենացի հետ և ձգձգում են խոսքը (Ջր, 397): Այսպիսի ձգձգված, անտեղի շեղումներով խճողված է քաղաքացի Եզոր Գեղամիչի բաժակաճառը, որտեղ հիշատակվում են Զիվանու խոսքերը, Մատուրյանի տողերը՝ «Կարդացողի միտքն է կտրուկ, Սիրտը պայծառ ու լուսավոր» աղավաղված ձևով (Իմ տան, 86): Ահա քծնող Գիժ մոզու խոսքը. «Ճիշտ է, Եզոր Գեղամիչ, ես քո ցավը տանեմ, դու ինձ հեշ: Մարդս ժիզնում պիտի մարդ լինի: Որ ժիզնում մարդ շեղավ, կյանքում էլ մարդ չի լինի» (Իմ տան, 83):

Գյուլնազարյանի արձակում ինչքան քաղաքի պաշտոնյաների խոսքը փքուն է, ձգձգված, այնքան էլ շինականի խոսքը հակիրճ է, առարկայական, ժողովրդական բառ ու բանով հարուստ: Ահա ծերունի Վլասի խոսքը. «Շաղիկս երկու տարեկան կարմրուկով հիվանդացավ: Տարանք Աշտարակ, բժիշկ Սաթումյանն ասաց՝ տարեք Ապարան: Տարանք: Երեխեն մրսեց: Նազոն թիկունքին բանկաներ գցեց, տեղերը կապտեցին: Հետո էլ դանթափի շյ խմեցրինք, քրտնեց, հազն անցկացավ, ոնց որ դանակով կտրես»: Կամ. «Շաղիկս մի օր մոր հետ գնացել էր այգի: Ծա տուչ, եկա, մի տեսակ անհանգիստ էի: Սեղ կանգնեցրի, եզներն արձակեցի, տարա գոմ, առաջները խոտ գցեցի, ասեցի՝ ես պտի էթամ, իմ զավակին տեսնեմ: Գնացի: Գնացի տեսա, հրես նազոն թմբամիչի լորին է հավաքում: Մառի տակին էլ էրեխեն բաց-բաց քնել է: Մոտ գնացի... հիմի էլ, որ հիշում եմ, մազերս բիզ-բիզ են կանգնում... Տեսա երեխու կողքին հրես գյուրգա օձը կուտապ կկած» (Ջր, 450—

451): Ահա Չափարի Սամսոնի խոսքը. «—Ձերոնք հարուստ էին: Յոթ ախպեր էին, յոթ լուծ եզ ունեին, երկու հեկտար ցորենատեղ, երեք հեկտար այգի: Ես աղքատ էի, ունեի՝ մի մեր, մի լղար կով, մի ավանակ, մի կատու: Հերզ մարդ ուղարկեց ուզելու: Ալոյանց Բարսեղն էն է, խոսքի էր գալիս: Ես գիշերը Օզիդային տարա Կոշ, ձիով տարա: Տարա քեռոնցս տուն: Հետո յոթ օր պահեցի: Մատով չկպա: Ութերորդ օրը մարդ ուղարկեցի, ասեցի՝ ես մեղա... Ալոյանց Բարսեղը խոսքի եկավ, օրհնեց» (415): Ինչպես տեսնում ենք, գյուղացին առաջվա պես խրթին բարբառով չի խոսում, նրան բնորոշ է առարկայական, կոնկրետ, բառուբանով հարուստ խոսքը, ուր մուտք են գործել գրական շատ ձևեր՝ Այգի, եկա, անհանգիստ էի, խոտ գցեցի, արձակեցի, յոթ օր, յոթ լուծ եզ, մարդ ուղարկեց: Հարուստ է դարձվածքներով՝ խոսքի եկավ, մատով չկպա, խոսք էր տալիս, մազերս բիզ-բիզ են կանգնում և այլն:

Անհատականացման լեզվական միջոցներ են անունների կրճատված ձևերը, բառերի աղավաղված, ոչ տեղին գործածությունը: Այսպես՝ Զավզակ Մարգարիտը «ընդհատակի» բառի փոխարեն ասում է «հատակատակի»: «Պարզվում ա, որ հատակատակի (ուզում էր ասել ընդհատակի) անդամ ա եղել...» (Ջր, 552): Նամակատարը նյութը նույն է արտասանում: «Հրանուշը չէր հասկանում տակալի՞ն բառը, ասում է կատավին (Իմ տան, 65): Ենոք Բիձայի զրուցակիցը ընկույզ է ասում, իսկ Ենոք բիձան՝ պոպոֆի: Մորուք Ենոքը սիրում է անգիր արած մի քանի ուսերեն բառեր կրկնել. «Ռուսն ասում է՝ նաուկա եստ սվետ, բեզ նաուկա, եստ տմա, պանիմայեշ» (Ոսկի, 115): «Գնացողները գնացողների մասին» պատմվածքում գյուղացին օգտագործում է դրաստի, պաժալուստա, դա, խոբոշո, նետս, ողկա, իսպոլնստով (իսպոլնիտելնի լիստ) ուսերեն բառեր: Անհատականացման միջոց են նաև հեռտորական հարցը, առկոչումները: Օրինակ՝ կոմերիտական Մենի Շմավոնն ասում է. «Ովքե՞ր ենք մենք: Մենք, ընկերներ, սոցիալիզմ կառուցողներ ենք: Ո՞րն է մեր նպատակը: Մեր նպատակը մարդկության պայծառ ապագան է: Ո՞ւմ դեմ ենք պայքարում: Միջազգային կապիտալիզմի, կուլակային թափթիուկների, բանդիտների, հակահեղափոխական տարրերի» (Ջր, 226): Այդ կոմերիտականները, որոնց ժողովուրդը «ծակ ակտիվ» էր անվանում, անհատականացված են նաև իրենց բառապաշարով՝ կուլակային տարրեր, կուլակի դուդուկ, թութակ, դասակարգային պայքար, թշնամու թափթիուկ, զգոնություն, բթացում, սոցիալիզմի թշնամի և այլն, և այլն: Որոշ շինականներ էլ անհատականացված են գրական ձևեր գործածելով: Օրինակ՝ Շինական ներսես բիձան իր ասելով վեպ է գրում, որտեղ կան՝ թմբային սիստեմ, շարային սիստեմ, առաջավոր մեթոդ, լյարդ, խոլեստերին, զլաուկոմա, արտեզյան ջրհոր, ծանր ջուր և այլն, օժանդակ բայի ա-ի փոխարեն է է ասում: Օրինակ՝ «Վարազդատը միջնակիս տիրացել է: Էն է Սեյրանը ծերից ծեր լոբի է ցանել: Աղջիկն էլ է լավը, տղեն էլ» (Ջր, 503): Երեխան երեխա է, աղջիկը որն է, տղեն որը: Առյուծի կորյունն առյուծի կորյուն է, ուզում է էզ լինի, ուզում է արու» (Ջր, 462—464):

Անհատականացման միջոց են նաև նամակները՝ գրված շինականների կողմից:

Անհատականացման միջոց են նաև ավելորդ անվանումները, ինչպես՝ Մատնաշափիկ Անտոն, Կիսլանջ Տաճատ, կորեկի հատիկ Տաճատ, սիլոսի աշտարակ Միսակ, շուի կոունկ Եղիշ, Աղջի Աշիկ, Ածելի Եղո, Փափուկ խոզ էմման, սակայն և այնպես Միքայել, նուս Ազատյան, մեր Արաքսի Ահարոնը և այլն:

Ամփոփենք. Գյուլնազարյանը, գրելով *Տերյանի, Բակունցի լեզվական դավանանքով*, իր արձակը երանգավորել է ժողովրդական բառուբանով: Նրա խոսքը առարկայական է ու պատկերավոր: Գյուլնազարյանը խոսքը ոճավորելու վարպետ է, նրա արձակում գրեթե յուրաքանչյուր շինական իր ուրույն խոսքն ունի՝ դարձվածքներով հարուստ: Գյուղաշխարհի կյանքը ներկայացնելու տեսակետից Գյուլնազարյանը Թումանյանի արժանի աշակերտն է: Այս բանը երևում է նաև նրա երգիծական խոսքում, գործող անձանց լեզվական ատաղձով անհատականացման միջոցներում, պատկերավորման և արտահայտչական միջոցների համակարգում, որոնց հնարավոր չէ անդրադառնալ մի հոդվածում: Նրան հաջողվել է շինականներին խոսեցնել գրական հայերենով՝ բարբառային մի երկու ձևով անհատականացնելով խոսքը: Գյուլնազարյանի խոսքային մշակույթի ակունքը, ինչպես մի առիթով ասել է ինքը, Աշտարակի այգիներում ու հնձաններում ստեղծված խոսքազրույցն է, իր պապի խոսակցական լեզուն:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իմ տան*,—*Իմ տան բաց պատուհանները*, 1981:  
*Հանաք*,—*Մեր գյուղի հանաքները*, 1991:  
*Հոր*,—*Ինչ-որ տեղ վերջանում է հորիզոնը*, 1966:  
*Ոսկի*,—*Ոսկի որոնողները*, 1964:  
*Չն*,—*Չուղարկված նամակներ*, 1975:  
*Ջր*,—*Ջրադաց. ժողովածու*, 1989:  
*Սիրիբ*,—*Սիրիբ*, 1975:

**С. В. ГЮЛЬБУДАГЯН**— Некоторые вопросы искусства слова в творчестве Х. Гюльназаряна.— Характеризуются язык и темль произведений современного признанного прозаика Хажака Гюльназаряна, исследуются наиболее упрямительная лексика, фразеология, их стилистическая функция, язык как средство индивидуализации героев.